Մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «Ն. Ծաղկավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (11 դասաժամ), ինֆորմատիկայի (11 դասաժամ), դասվարի (15 դասաժամ՝ 2 րդ դասարան) դասվարի (16 դասաժամ՝ 4-րդ դասարան) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող
փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի
26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝
աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղե-
կանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի
պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝
ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող
փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ
զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ
գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր
(առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու
դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ
առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 10-ից մինչեւ նոյեմբերի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա **2022 թ. նոյեմբերի 25-ին՝ ժամը 14:00-ին,** ՀՀ Տավուշի մարզի Ն. Ծաղկավանի միջնակարգ դպրոցում:
Տեղեկությունների համար զանգահարել (093) 30-36-24 հեռախոսահամարով: